ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 628 - Ա

12 դեկտեմբերի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՍՈՂԱՆՔՆԵՐԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՓԼՈՒՋՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, սողանքների, հնարավոր քարաթափումների տեղամասերն ու վթարային կամուրջները հաշվառելու, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու, արտակարգ իրավիճակներում վնասների նվազեցման և հետևանքների վերացման աշխատանքներն օպերատիվ կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գրիգորյան Նարեկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, նախագահ

Գալստյան Գևորգ - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ /համաձայնությամբ/

Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

Համբարձումյան Համբարձում - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Հարությունյան Վանիկ - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը սույն որոշմամբ ստեղծված հանձնաժողովին ներկայացնել համայնքների հեղեղավտանգ, սելավավտանգ, սողանքավտանգ տարածքների, հնարավոր քարաթափումների ու վթարային կամուրջների վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ՝ հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին, անհրաժեշտության դեպքում գործողությունների ուղղություններն ամրագրել համապատասխան իրավական ակտերով.

2) հաշվառել համայնքներում առկա սարքին ինժեներական տեխնիկաները /մղաններ, էքսկավատորներ, ինքնաթափեր և այլն/ և ձեռք բերել պայմանավորվածություններ անհրաժեշտության դեպքում դրանց օգտագործման վերաբերյալ:

3. Հանձնաժողովին՝ տասնօրյա ժամկետում վերլուծել համայնքներից ստացված տեղեկատվությունը, կազմել պլան- ժամանակացույց մարզում 2020 թվականի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, վթարային կամուրջների փլուզման, հնարավոր քարաթափումների, սողանքավտանգ տարածքներում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման, հետևանքների վերացման միջոցառումների մասին և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը:

12.12.2019

ԳԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

[illegible] SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ Գ.
ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ